«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող գործունեության՝ «Արծվանիկի պոչամբարի ընդլայնման նախագիծ» աշխատանքների վերաբերյալ 1-ին հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

22. 11. 2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՕ-150-Ն օրենքի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2343-Ն որոշմամբ /այսուհետ՝ Հավելված/ սահմանված կարգով, որպես ազդակիր համայնք՝ ՀՀ Սյունիքի մարզի Կապան քաղաքի մշակույթի կենտրոնում /ՀՀ, Սյունիքի մարզ, Կապան, Չարենց 1 շենք/ 2024 թվականի նոյեմբերի 18-ին ժամը 14:30-ին տեղի ունեցավ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող գործունեության՝ «Արծվանիկի պոչամբարի ընդլայնման նախագիծ» աշխատանքների վերաբերյալ 1-ին հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության աշխատակիցներ, Կապան համայնքի ավագանու անդամներ և համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավար՝ Գևորգ Փարսյանը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ փաստաթղթերին կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 176 (7177) համարում, Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի (www.kapan.am) հայտարարությունների բաժնում:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Հարգելի ներկաներ ողջունում եմ Ձեզ՝ հանրային քննարկմանը ներկա գտնվելու համար: Այսօրվա հանրային քննարկումը վերաբերում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից նախաձեռնված «Արծվանիկի պոչամբարի ընդլայնման նախագծի» շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատմանը, որը թվով առաջին հանրային քննարկումն է: Օրենքով սահմանված կարգով հանրությանը իրազեկվել է այսօրվա հանրային քննարկման վերաբերյալ և 20 օրվա ընթացքում շահագրգիռ կողմերը կարող էին գրավոր իրենց հարցերը, առաջարկությունները ներկայացնել համայնքապետարան: Նշեմ, որ որևիցե գրավոր հարցեր, առաջարկություններ, դիտարկումներ չենք ստացել, բայց այսօրվա օրակարգում հնարավորություն ենք ունենալու, որ հետաքրքրված

անձինք՝ նաև շահագրգիռ կողմերն իրենց հարցերն ու առաջարկությունները, ինչպես նաև դիտարկումները ներկայացնեն: Այսօրվա օրակարգում հետևյալ բովանդակությունն է՝ զեկուցողները կներկայացնեն գործունեության նկարագիրը, այնուհետև կլինեն հարցեր, առաջարկություններ: Իսկ վերջում ես կամփոփեմ: Այժմ առաջին զեկույցով հանդես կգա «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության Կայուն զարգացման գծով տնօրենի տեղակալ Ասյա Ղազարյանը: Խնդրեմ տիկին Ղազարյան:

Զեկույց (Ասյա Ղազարյան) – Շնորհակալություն պարոն Փարսյան: Ողջունում եմ բոլորին: Սկսեմ այն բանից, որ ՀՀ բնապահպանության նախարարությունը 2016թ. դեկտեմբերի 16-ին Շրջակա միջավայրի վրա ազդեցության թիվ ԲՓ 108 փորձաքննական եզրակացությամբ ամրագրել էր, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային հանքավայրը 22 մլն տոննա արտադրողականությամբ շահագործելու դեպքում, ներկայիս գործող պոչամբարն իր նախագծային տարողունակությամբ կարող է ընկերությանը ծառայել մոտ 10 տարի: Եվ, որպես խնդրի լուծման անհրաժեշտություն, ինչպես նաև փորձաքննական եզրակացության պահանջ՝ ընկերությանը պարտավորեցրել է առաջիկա 10 տարիների ընթացքում, այսինքն՝ 2016 թ.-ից սկսած իրականացնել պոչամբարի համալիր ուսումնասիրություններ և մշակել նոր պոչամբարի կամ ներկայիս՝ Արծվանիկի պոչամբարի ընդլայնման նախագիծ: Այս պահանջներից ելնելով, այսօր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իրականացնում է սույն նախատեսվող գործունեության, այն է Արծվանիկի պոչամբարի ընդլայնում, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը և համապատասխանաբար փորձաքննությունը: Նշեմ, որ ընկերությունը ՀՀ կառավարության 2023թ. թիվ 2343-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին» որոշմամբ սահմանված կարգով, գրավոր ծանուցել է համայնքի ղեկավարին, նախատեսվող գործունեությունն իրականացնելու վերաբերյալ: Եվ, ինչպես նշեց համայնքի ղեկավարը, համապատասխանաբար համայնքապետարանն ապահովել է օրենքով սահմանված կարգով ծանուցումը հանրությանը՝ այն հրապարակելով «Առավոտ» օրաթերթում, համայնքապետարանում և այլ հասարակական վայրերում՝ ցուցատախտակների վրա: Նշեմ նաև, որ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այս գործունեությունը դասվում է Ա կատեգորիայի շարքին և ուղեկցվում է երկու հանրային քննարկումներով: Սա առաջին հանրային քննարկումն է և առաջին հանրային լսումն իրականացվում է Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից՝ նախնական համաձայնության կան անհամաձայնության տրամադրման փուլում: Եվ երկրորդ հանրային լսումը կազմակերպվում և իրականացվում է փարձաքննության ընթացքում լիազոր մարմնի

համակարգում գործող «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Այնուհետև նշեմ, որ ինչպես նշեց պարոն Փարսյանը, շահագրգիռ հանրությունը հնարավորություն ուներ ծանուցման օրվանից սկսած 20 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել գրավոր և էլեկտրոնային տարբերակով իրենց առաջարկությունները և դիտողությունները, ինչպես նաև կարծիքները, որոնք նույնպես Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը չի ստացել և ինչպես նշվեց այս հարթակը կարող եք նույնպես օգտագործել առաջարկությունների և կարծիքների համար: Նշենք նաև, որ համայնքի ավագանին հանրային լսումից հետո 30 աշխատանքային օրվա ընթացքում որոշում է ընդունում նախատեսող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն կամ անհամաձայնություն տրամադրելու վերաբերյալ, որը պետք է պարունակի հիմնավորումներ, դրա պատճառները և օրենքով սահմանված կարգով այն ներկայացնի լիազոր մարմին: Այսքանը որպես նախաբան: Եվ խոսքը փոխանցեմ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տեխնիկական գծով տնօրեն Արման Վարդանյանին:

Զեկույց (Արման Վարդանյան) – Բարև Ձեզ հարգելի քաղաքացիներ և գործընկերներ: Ինչպես արդեն նշվեց քննարկվող գործունեությունը, դա փորձաքննական պահանջ է, որը ստացել ենք 2016 թվականին: Բանն այն է, որ 2016 թվականին նախագծի փոփոխության շրջանակում ներկայացվել էր նաև պոչամբարի նախագիծ, որը նախատեսվում էր պոչամբարի պատվարը բարձրացնել մինչև 1010մ նիշը: Սակայն, փորձաքննությունը պահանջեց մեզնից կատարել լրացուցիչ հետազոտություններ, ուսումնասիրություններ՝ պոչամբարի պատվարի կայունության և այլ իմաստով: Եվ ներկայացնել առաջիկա 10 տարիների ընթացքում, այսինքն՝ մինչև 2026 թվականը ներկայացնել նոր պոչամբարի նախագիծ կամ գոյություն ունեցող պոչամբարի ընդլայնման նախագիծ: Այսինքն՝ այս որոշմամբ ուժի մեջ թողնվեց այդ պահին պոչամբարի գործող նախագիծը, որը նախատեսվում էր պոչամբարի պատվարը հասցնելը մինչև 964 նիշ և ծավալը հասցնել մինչև 325մլն մետր խորանարդ: Եվ, ինչպես պահանջը ներկայացվել էր, այնպես էլ մենք սկսեցինք գործը: Հենց 2017 թվականից սկսած պատվարի մասով կատարվել են բազում ուսումնասիրություններ, ներգրավվել են հեղինակավոր միջազգային ընկերություններ, այդ թվում տեղական ընկերություններ: Հսկայական աշխատանք է կատարվել պատվարի կայունության և ընդհանուր պոչամբարի ուսումնասիրության մասով: Եվ այս պահին էլ արդեն հետազոտությունների վերջին փուլն է կատարվում, կրկին անգլիական հեղինակավոր կազմակերպության կողմից: Իրենք բերել են հաստոցներ և տվյալ պահին կատարվում է խորը զոնդավորում պատվարի վրա՝ կայունությունը և այլ հատկություններ

ուսումնասիրելու մասով: Զուգահեռ կատարվում են այլ նախագծային աշխատանքներ, նախագծային կոնցեպտը պատրաստ է, այժմ ավելի մանրամասն աշխատանքների նախագիծն է կատարվում: Եվ այս պահի տվյալներով՝ կատարված աշխատանքով «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությանը տրված արդյունահանման թույլտվության ծավալները բավարարելու համար անհրաժեշտ է լինելու ընդամենը պատվարի մակարդակը բարձրացնել մինչև 985 մետր նիշ՝ 1010-ի փոխարեն: Այս պահին նիշը գտնվում է 936 մետրի վրա, այսինքն՝ մոտ 50 մետր բարձրացնել և այս պահին պոչամբար լցված է մոտ 300 մլն մետր խորանաղ ծավալով: Ինչպես ասացի նախագծային աշխատանքները կատարվում է, զուգահեռ հետազննում է կատարվում, զուգահեռ պատվարի ամրացման աշխատանքներ է կատարվում և արդեն նախագծային լուծումներն ավելի մանրամասն պրեզենտացիայով կներկայացնի Արմենակ Սահակյանը, ով Ջրային ռեսուրսների և հիդրոտեխնիկական կառուցվածքների կառավարման դեպարտամենտի ղեկավարն է:

Զեկույց (Արմենակ Սահակյան) – Շնորհակալություն: Ողջունում եմ բոլորիդ: Սկսենք մի փոքր պատմական ակնարկից: Արծվանիկի պոչամբարը գտնվում է Կապան քաղաքից մոտ 6 կմ հեռավորության վրա՝ դեպի հյուսիս-արևելք հատվածում: Պոչամբարի շինարարական աշխատանքները սկսվել է դեռևս 1970-ական թվականներից, շահագործման է հանձնվել 1977 թվականին: Ինչպես արդեն նշվեց պոչամբարի նախագծային ծավալը 325 մլն մետր խորանարդ է, տղմալցման մեթոդը՝ զենիթային: Պատվարի բարձրացումը կատարվում է ջրազրկված պոչանքի ավազային զանգվածով, շեպի թեքման անկյունը տարբեր տարիներին տարբեր նախագծային լուծումների արդյունքում տատանվում է 1:6-ից մինչև 1:4.5: Պոչամբարի նախագծային նիշը 964 մ է: Փաստացի լցվածությունն այս պահի դրությամբ 300 մլն մետր խորանարդ է, իսկ պատվարի նիշը կազմում է 936 մ: Համաձայն նախկին ՇՄԱԳ-ի տրված պահանջի՝ 2016-2023 թվականը կատարվել են բազմաթիվ ուսումնասիրություններ, թե՛ տեղական, թե՛ արտասահմանյան կազմակերպությունների միջոցով: 2016-2017 թթ. կատարվել են ավելի քան 65 հորատանցքերի հորատման աշխատանքներ և հետազոտություններ, 12 սիփիթի (CPT) թեստ, որի արդյունքում վերցվել է 78 նմուշ: 2020 թվականին կատարվել է 48 հորատում 25 սիփիթի, 296 նմուշ բազմատեսակի ֆիզիկոմեխանիկական հատկությունների սպասարկման համար նախատեսված փորձարկումների: 2022 թվականին կատարվել են ևս 4 սիփիթի: 2023 թվականին ևս 9-ը: Արդյունքում ստեղծվել է բազմապիսի և բազմաշերտ ինֆորմացիոն բազա, որը կիրառվել է սույն նախագծի շրջանակներում: Սույն պրեզենտացիայի հատվածը ներկայացված է նախատեսվող գլխավոր հատակագիծը, որի արդյունքում

պոչամբարի պատվարը նախատեսվում է բարձրացնել մինչև 985 նիշ: Արդյունքում անհրաժեշտ է լինելու, ըստ մեր տեսլականի, կառուցել երեք ափապաշտպան պատվարներ, որոնք կսահմանափակեն պոչամբարի հայելու տարածումը: Կառուցել ևս մեկ պատվար հյուսիսային հատվածից, որը կսահմանափակի տարածումը դեպի Արծվանիկ գետի հոսանքով ի վեր: Նախատեսվում է կառուցել Արծվանիկ գետի հունի տեղափոխման համար նախատեսված համակարգ՝ իր ջրամբարով: Նախատեսվում է կառուցել ևս մեկ նոր ջրընդունիչ աշտարակ, և իրականացնել պոչամբարի պատվարի ամրաբեռնում՝ հավելյալ բերվածքային գրունտային զանգվածով: Այստեղ ներկայացված է պոչամբարի ծավալային կողը: Այս պահի դրությամբ նախատեսվում է ավելացնել ևս 238 մլն մետր խորանարդ, որպեսզի կարողանանք մինչև 2041 թվականը տրված թույլտվության շրջանակներում իրականացնել պոչանքի տեղադրում: Կայունության պաշարի մասով Հայաստանի Հանրապետության գործող օրենքների պահանջներով կայունության պաշարի գործակիցը ստատիկ պարագայում պետք է լինի 1.32, հետսեյսմիկ դեպքում՝ 1: Սակայն, մենք առաջնորդվելու ենք միջազգային առաջադեմ փորձով, մասնավորապես՝ 2024 թ. նոր հրատարակված: Համաձայն որի ստատիկ կայունության պաշարի գործակիցը պետք է լինի 1.5, իսկ հետսեյսմիկը՝ 1.1: Այսինքն՝ այդ կազմակերպության կողմից ընտրվել է ավելի կոնսերվատիվ տարբերակ և ավելի խիստ պահանջներ: Նախատեսվում է իրականացնել պոչամբարի պատվարի ամրաբեռնում: Ամրաբեռնման գումարային ծավալը կազմում է մոտավորապես 17 մլն մետր խորանարդ: Նախատեսվում է երկու հատվածում իրականացնել պոչամբարի պատվարի ամրաբեռնում ստորին հատված, առաջնային պատվարի տեղամաս և վերին հատված, որը գտնվում է այս պահի դրությամբ շահագործվող տեղամասում: Այս միջոցառումների իրականացման արդունքում էլ ավելի կբարձրացվի պոչամբարի պատվարի կայունության պաշարի գործակիցը և հետևաբար ինքնըստինքյան բերելու է ռիսկերի նվազեցումը: Նախագծի շրջանակներում, ինչպես արդեն նշվեց, նախատեսվում է նախկինում 1010մ-ից նվազեցում մինչև 985մ նիշ և նախատեսվում է իրականացել նաև պոչամբարի կառուցման՝ պատվարի բարձրացման եղանակի փոփոխություն: Այս հատվածում ներկայացված է այս պահի դրությամբ փաստացի գործող եղանակը՝ պոչամբարի պատվարի բարձրացման, սակայն նախատեսվում է իրականացնել քարակոպճային կամ քարագրունտային լիցքով նախատեսված պատվարի բարձրացում, որը մեր խորին համոզմամբ բերելու է պոչամբարի պատվարի կայունության զգալի փոփոխության: Նախատեսվում է կառուցել երեք ափապաշտպան պատվարներ: Կարմիր գույնով նշված են այն հատվածները, որոնք ափապաշտպան պատվարների չկառուցման դեպքում պոչամբարի

հայելին ծավալվելու է դեպի այդ կողմերի վրա և ավելի է մոտենալու գյուղերին: Ուստի, պոչամբարի պատվարի հայելու հավելյալ տարածումը կանխելու և սանիտարական գոտու նվազագույն պայմանին բավարարելու նպատակով նախատեսվում է կառուցել երեք ափապաշտպան պատվարներ: Ափապաշտպան պատվար մեկը լինելու է քարագրունտային նյութից, պատվարի բարձրությունը 40 մ է, իսկ միջին լայնությունը՝ 320 մ, շեպի թեքությունը վերընթաց՝ 1.2, իսկ վարընթաց՝ 1.35: Պատվարի շինարարությունը նախատեսվում է ավարտել մինչև 2026 թվականը: Նախատեսված է լինելու 0.43 շերտ կամ 9 բալ երկրաշարժի համար: Ափապաշտպան երկուսը նմանատիպ նույն կտրվածք ունեցող քարագրունտային պատվար է, բարձրությունը՝ 30 մ: Ափապաշտպան երեքը՝ նմանատիպ կտրվածով ևս 30 մ, որով կանխելու է տարածումը: Արծվանիկ գետի հունի տեղափոխման համար նախատեսվում է կառուցել մոտ 6 կմ երկարությամբ երկաթբետոնե ջրանցք, հետևյալ կտրվածով՝ 4մ լայնությամբ և 2.3մ բարձրությամբ: Այն տարածվելու է Արծվանիկ գետի հունից դեպի Արծվանիկ գյուղ ընկած հատվածից բոլոր ջրաավազանները: Վերցնելով նաև Արծվանիկ գետի հիմնական հոսքը և այն ուղղորդելու է դեպի Աճանան գյուղի վերև գտնվող տեղամաս: Այս հատվածում նախատեսվում է կառուցել թունել՝ ջրահեռացման թունել: Ջրահեռացման թունելը վերջում միանալու է նոր նախատեսվող ջրամբարին: Ջրամբարի ծավալը մոտավորապես 40 հազար լիտր խորանարդ է լինելու: Ջրամբարի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, ջրերն օգտագործվելու են ոռոգման համար: Հյուսիսային պատվարը նախատեսվում է կառուցել Արծվանիկ գետի հունում, տարածումը դեպի Սևաքար և Չափնի գյուղեր կանխելու համար: Կարմիրով նորից ցույց է տրված այն տեղամասը, որը Արծվանիկի պոչամբարի հայելին տարածվելու է այդ տեղամասում, եթե հյուսիսային պատվարը այս տեղամասում չկառուցվեր: Ու կազմված է լինելու առաջնային պատվարից: Նախատեսվող առաջնային պատվարի գագաթի նիշը 972մ է լինելու: Նախատեսվում է կատարել երկու բարձրացում: Բարձրացումը կատարվելու է քարալիցքային գրունտից: Կտրվածքում ներկայացված է այս հատվածը: Արծվանիկի պոչամբարի դեպրեսիոն կորի իջեցման համար նախատեսվում է իրականացնել դրենաժային հորեր, մոտավորապես՝ թվով 53 հատ դրենաժային հոր: Դրենաժային հորերը նախատեսված են լինելու 1500 մմ տրամագծով հորատման համար, որի մեջ տեղադրված է լինելու խորքային պոմպեր: Խորքային պոմպերի միջոցով ջուրը մղվելու է դեպի ավազան: Այս պահի դրությամբ արդեն իսկ փորձնական իրականացվել է դրանցից 10 հատի կառուցում և հանձնված է շահագործման: Ներկայացված է տեխնիկան, որով իրականացվել է այդ աշխատանքները: Նախագծով նախատեսվում է նաև էլ ավելի մեծացնել և զարգացնել հսկիչ

չափիչ սարքավորումների բազան: Նախատեսվում է տեղադրել թվով 39 հատ դիմահորային պիզոմետրեր, որով նախատեսված են լինելու ծակոտենքի ճնշման չափման համար: Նախատեսվում է տեղադրել 15 հատ կասագրանդե տիպի պիզոմետրեր՝ ջրի մակարդակի չափման համար: Եվս 4 հատ ինկլինոմետր է նախատեսվում տեղադրել, որը հնարավորություն կտա գնահատել պոչամբարի պատվարի տեղաշարժումները: Այս պահի դրությամբ արդեն իսկ տեղադրվել է պոչամբարի սեյսմիկ մոնիթորինգի համակարգ, որը միացված է սեյսմիկ պաշտպանության ցանցին և սեյսմիկ պաշտպանության հետ արդի համագործակցության շրջանակներում ստանում ենք ինֆորմացիա՝ ինչպես կոնկրետ բուն Արծվանիկի պոչամբարի տեղի ունեցող դեֆորմացիաներից և սեյսմիկ ալիքների վերաբերյալ, այնպես էլ տարածաշրջանում տեղի ունեցածի ազդեցության հիման վրա: Թերևս այսքանը:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Շնորհակալություն: Պարոն Ստեփանյան Դուք զեկուցելու բան ունե՞ք:

Խոսք (Արմեն Ստեփանյան) - Պարոն Փարսյան պատրաստ ենք հարց ու պատասխանի տեսքով՝ սոցիալական ծախսերի վերաբերյալ, իսկ զեկույցի տեսքով՝ ինչպես ցանկանաք:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Լավ, վերջնական զեկույցները ավարտենք, նոր անցնենք հարց ու պատասխանին:

Զեկույց (Արմեն Ստեփանյան) - Հարգելի ներկաներ, հարգելի պարոն Փարսյան ամփոփել ենք 2023 թվականին մեր սոցիալական ներդրումները և ծախսերը՝ Կապան խոշորացված համայնքում: Ընդհանուր առմամբ սոցիալական աջակցությունը, այդ թվում աջակցություն այն անհատներին, համայնքներին, ենթակառուցվածքներին և շինարարության գործում կազմել է մոտավորապես 1,3 մլրդ դրամ, որի մոտավորապես կեսը ընկնում է այն փոխատուցումներին, որոնք մենք վճարում ենք ամսական՝ պոչամբարին հարակից գյուղերին: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզում ծախսվել է մոտավորապես 250 մլն դրամ, իհարկե, այս աղյուսակում բացակայում է Քաջարան համայնքում և այլ մարզերում իրականացված ծախսերը, որը կազմում է մոտ 164 մլն դրամ: Սուբվենցիոն ծրագրերը ընդհանուր առմամբ կազմել է 378 մլն դրամ: Ուսման վարձ՝ 97 մլն դրամ կլորացված, այլ մարզերն ընդհանուր վերցված մոտավորապես 200 մլն ՀՀ դրամ: Բուժսպասարկումը մոտավորապես 165 մլն դրամ: Սյունիքի մարզը կրկնվեմ՝ Քաջարան համայնքը հանած՝ 24 մլն դրամ, այլ մարզերում՝ 61 մլն դրամ: Սպորտը՝ 540 մլն դրամ, որի առյուծի բաժինն ընկնում է «Սյունիք» ֆուտբոլային ակումբի վրա, մոտավորապես 450 մլն դրամ: Մնացած ծախսերը այլ մարզաձևերի աջակցության վրա է ծախսվել: Սյունիքի մարզի մյուս համայնքներ՝ 18 մլն դրամ: Այլ մարզերում մոտավորապես 120 մլն: Այս ծախսի այլ

մարզերում առյուծի բաժինն ընկնում է համահայկական խաղերին աջակցությունը, որտեղ Զանգեզուրի պոլնձամոլիբդենային կոմբինատը գլխավոր հովանավորներից մեկն է: Մշակութային միջոցառումները մոտավորապես 23,5-24 մլն դրամ, աջակցություն ցուցաբերվել է Կապան համայնքում, Սյունիքի մարզ՝ 280 մլն, այլ մարզերում՝ 60մլն: Պաշտպանության նախարարություն՝ հիմնականում այլ մարզերում է այդ գումարը ծախսվել, որպես սոցիալական աջակցություն և նմանատիպ ծախսեր՝ օդանավակայան, որը ընդհանուր մեր ծախսած գումարի մեջ, իհարկե, մեծ գումար է կազմում: Եվ վերջապես 2023 թվականի օգոստոս ամսից կանոնավոր չվերթներ են արդեն տեղի ունենում Երևան-Կապան և Կապան-Երևան ուղղություններով: Այդ նպատակով ընդհանուր մոտավորապես 730 մլն դրամ փող է ծախսվել՝ ներդրումների և բարեգործության տեսքով: Ընդհանուր առմամբ Կապան խոշորացված համայնքում ծախսվել է 3 միլիարդից մի քիչ ավել գումար: Այդքանը այս սլայդի վերաբերյալ: Երկրորդ սլայդը՝ առողջություն և առողջապահություն, որոշեցինք առանձնահատուկ խոսել: Այստեղ ամփոփվել են 2023 թվականի տվյալները և 2024 թվականը՝ մինչև հոկտեմբեր ամիսը ներառյալ: Քաջարան համայնքում՝ ընդհանուր շահառուների թիվը, որպես աշխատակիցներ՝ 1647 հայտ է եղել, Կապան համայնքում՝ 985: Ընդհանուր առմամբ Սյունիքի մարզը՝ Կապան և Քաջարան խոշորացված համայնքներից դուրս 84 հայտ-դիմում է եղել աշխատակիցների կողմից: Իսկ ընդհանուր առմամբ 2 հայտ է եղել և բավարարվել: Ինչպես տեսնում ենք կա Երևան համայնք, Արծվանիկ, Սևաքար, Աճանան, Սյունիք գյուղերը: Ընդհանուր առմամբ 30 հոգի մասնավորապես՝ Արծվանիկ, Սևաքար, Աճանան և Սյունիք համայնքից դիմել են աշխատակիցներ, իսկ աշխատակիցներից դուրս՝ 2 հայտ ենք ունեցել՝ 2023 թվականին: Պատկերը համարյա պահպանվել է 2024 թվականին մինչև այսօր: Տարվա վերջ մնացել է 2 ամիս ամփոփելու: Պատկերը շատ թե քիչ կրկնվում է: Պակասել են Քաջարանում, ընդհանուր առմամբ զգալի դիմումներ-հայտերը՝ Կապանում մոտավորապես պահպանվել են նույն թվերը: Այսքանը սոցիալական մասով:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Շնորհակալություն պարոն Ստեփանյան: Այժմ անցնենք հարցերին, առաջարկություններին և դիտարկումներին, բայց ամեն ինչ կատարում ենք կազմակերպված: Ով ուզում է հարց հնչեցնել նախ ներկայանում է ու հարցը հնչեցնում: Զգտում ենք չաղմկել, մեկը մյուսին չխանգարել: Ո՞վ ունի հարցեր:

Հարց (Սասուն Մանուկյան) - Շնորհակալություն: Ես կցանկանայի իմանալ այդ աշխատանքներից հետո քանի՞ հա անտառային տարածք է մնալու պոչամբարի տակ և ի՞նչ է նախատեսվել, այսինքն՝ նկատի ունեմ կառավարության սահմանված 1045 որոշումը

կիրառելու եք թե՞ ոչ: Եթե այո, ապա գիտեք՝ ընթացակարգը նախատեսում է համապատասխան պայմանագիր:

Պատասխան (Ասյա Ղազարյան) - Շնորհակալ ենք հարցի համար պարոն Մանուկյան: Ուրեմն նշեմ, որ ներկայումս իրականացվում է այն հողակտորների ուսումնասիրությունը, որոնք նախատեսվում է, որ պետք է ծածկվեն պոչամբարի ընդլայնման արդյունքում: Նախնական ուսումնասիրության արդյունքում այնտեղ ընդամենը 4 հա անտառային, անտառ կատեգորիայի հողատեսք է և նշեմ նաև, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը նախաձեռնել է 80 հա անտառավերականգնման նախագիծ, որից 20 հա էր շրջակա միջավայրի ազդեցության փորձաքննական գնահատական ստացել: Եվ ներկայումս իրականացվում է 2 հա մելորացման և անտառտնկման աշխատանքները: Եվ դա արդեն պոչամբարի տարածքի արդեն իսկ խախտված անտառային կատեգորիայի հողատեսքերի վերականգնման համար էր, որը ներառում էր մինչև 2025 թվական խախտվող անտառային կատեգորիայի հողերի վերականգնումը:

Ավելացում (Սասուն Մանուկյան) - Ես ուզում եմ ավելացնել, որ այո այս պահին քաղաքի համար կարևոր երկու տարածքում անտառապատման ծրագիր է իրականացվում: Մեկը՝ շուկայի հայտնի հարակից տարածքն է: Եկեք անկեղծ լինենք այդ հետևանքը Կապանի կոմբինտանինն է, Քաջարանինը չէր: Բայց այդուհանդերձ մեր գործընկերները համայնքի ղեկավարի պնդմամբ ընդունեցին այդ առաջարկը նաև, որ նախատեսվող 20 հա-ից 2 հա-ը՝ 1.2 մի կողմից, 0.8-ը մի տարածքում անտառապատում իրականացվի: Նկատի ունեմ, որ այն հողատեսքերը, որոնք անտառային են՝ կադաստրային, դրանք բոլորը նույն ընթացակարգով անցնելու են ձեր տնօրինմանը:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Այո՛, նույն ընթացակարգով, պարոն Մանուկյան, մնացած բոլոր հողատեսքերը, իհարկե, օրենքով սահմանված կարգով կոմբինատը հետևողանորեն կանի: Ղազարյան Ասյայի ասածին ավելացնեմ, որ այդ 2 հա-ին ավել 18 հա-ը հենց «Հայանտառ»-ի առաջարկած վայրերում պետք է տնկման աշխատաքներ իրականացվեն սահմանված կարգով և ժամանակահատվածում: Այդ աշխատանքները մոտակա ժամանակներս արդեն ընթացք կստանան: Իսկ մնացածն արդեն կլինի նույն ձև՝ համապատասխան գործընթացներն անցնելուց հետո տնկման աշխատանքներ կսկսվեն:

Խոսք (Սասուն Մանուկյան) - Բարի, շնորհակալություն:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Այլ հարցեր:

Խոսք (Ռուբիկ Հովհաննիսյան) - Բարև ձեզ: Ես պոլիտեխնիկի դասախոս եմ: Ուզում եմ ներկայանալ: Քաջարանը իմ հայրենիքն է: 32 տարի աշխատել եմ Քաջարանի կոմբինատում, 28 տարի ղեկավարել եմ երկրաբանական բաժինը: Այսօր ինձ խիստ հուզում է ստեղծված իրավիճակը, որպես մասնագետ: Կողքից նայելով ասում են առաջին հարկատուն է դրանով բավարարվում են: Իսկ ի՞նչ է կատարվում հանքավայրում: Հանքավայրում, որը ես էի ղեկավարում 80-ական թվականներից հողախառնուրդի ամեն ինչով նորմալ... այսօր ուղղակի մի ամիս առաջ եղել եմ այնտեղ նայել եմ ու ի՞նչ է կատարվում: Առաջին՝ այնտեղ տեղի է ունենում ընտրովի շահագործում: Այսինքն՝ վերցրած ամենահարուստ երակը խորացել է գետի մակարդակից իջել է 120-130 մ ու դրանից հետո պղտորված ջրերում պոմպերի միջոցով լցվում են գետը: Ես գետը պարզ վիճակում չեմ տեսել: Հարցը դա չէ: Հարցը նա է, հետաքրքիրն այն է, որ 70 տարի շահագործվում է և այն ժամանակ՝ սովետի ժամանակ, ամբողջ ուղղությունը եղել է պղինձ և մոլիբդեն: Վերջին անգամ՝ 2007 թվականին ես եմ ներկայացրել տվյալներ, որպես գլխավոր երկրաբան, որտեղ հաստատված են 9 մետաղ, թանկարժեք մետաղներ՝ պղինձ, մոլիբդեն, ռենիում, սելեն, ռենիում, ոսկի, արծաթ և այլն: Այսօր զարգացումը միայն մեկ ուղղությամբ՝ հզորության մեծացումով: Գոնե ֆաբրիկայում, հանքաքարի մանրացնելուց հետո գնեին մագնիսական սեպարացիա, հանեին երկաթը և հազվագյուտ մետաղները: Չկա նման բան: Կորցնում ենք մենք՝ հսկայական կորուստներ ենք տալիս: Այսպես շարունակելով մենք 10-15 տարի եմ ես տալիս: Ու եթե նախկինում 9 մլն տոննա էր՝ իմ ժամանակ, այսօր՝ 22-23 մլն և կա թույլտվություն մինչև 40 մլն տոննա արտադրողականության: Եղեք ճիշտ, դա սխալ մոտեցում է: Եկեք մենք ֆաբրիկայի մասին մտածենք՝ նոր տեխնոլոգիական սխեմաներ դնենք: Այդ մետաղները, խտանյութերը ուղարկում ենք մեկ ուրիշի: Ես ճիշտն ասած մի 5-6 տարի գիրքը՝ գիտական, անձամբ այդ գիրքը տվել եմ Նիկոլ Փաշինյանին: Այդտեղ նշված է: Այդ մեր խտանյութերը ես ասել էի, որ այստեղ մետալուրգիական գործարան կառուցեն, մշակեն պղնձի և մոլիբդենի խտանյութեր և արդյունահանեն մնացած մետաղները: Դրանք ռազմավարական նշանակություն ունեցող մետաղներ են, որոնք ուրիշները վերցնում, խտանյութերը վերցնում, մշակում են և մյուս մետաղները վերցնում: Չի կարելի նման բան: Հարկավորա մտածել մեր ապագայի մասին: Ապագան շատ մառախլապատ է: Ես չեմ հասկանում: Մտածեք ֆաբրիկա - հանքավայր կապը ճիշտ տեղը դրեք: Չի կարելի մնացած մետաղները կորցնել: Վերջին տարիներին բացահայտել են հազվագյուտ ռազմավարական նշանակության մետաղներ, որոնք տարածվում են նաև Քաջարանի հանքավայրում: Ես ուզում եմ կարճ խոսել, բայց առաջարկություններ շատ կան: Մտածեք այդ մասին՝ Քաջարանի ապագայի մասին և ճիշտ

շահագործեք, քանի որ կյանքը կարճ է: Ես հաշվել եմ պաշարը՝ 150 տարվա պաշար: Իսկ այսօր ես ասում եմ 10-15 տարի՝ ոչ ավել: Սա ընտրովի շահագործում է: Հաջողություն եմ ցանկանում: Մտածեք փոփոխությունների մասին:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Պարոն Հովհաննիսյան, շնորհակալություն: Իհարկե, կարծում եմ այստեղ ներկա գտնվողները՝ շատերն են Ձեզ ճանաչում, որպես մասնագետի: Եվ Ձեր ներկայացրածը հաշվի կառնվի, բայց խնդրում եմ այսօրվա հարցերը, առաջարկությունները բխեն օրվա օրակարգից և օրվա թեմայից: Մենք խոսում ենք Արծվանիկի պոչամբարի ընդլայնման նախագծի վերաբերյալ և բոլոր այն ազդեցությունների, ինչ-որ վերաբերում է Կապանին: Համենայն դեպս դուք, որպես մասնագետ, կարևորում եմ Ձեր կարծիքը: Շնորհակալություն:

Մեջբերում (Ռուբիկ Հովհաննիսյան) - Կներեք, ես մի շատ կարևոր հանգամանք նաև բաց թողեցի: Խոսքը պոչամբարների մասին է, որոնք 70 մլն տոննա գտնվում են, ուրեմն կոնսերվացված վերևի մասում՝ Քաջարանից մինչև Կապան և այսօր աշխատում է 600 մլն տոննա արդեն անցած Արծվանիկի պոչամբարին: Պատվարները ամրացվելու է և այլն, այսօր 7-8 բալանոց սեյսմիկ գոտում ենք մենք գտնվում: Մտածո՞ւմ եք այդ մասին: Նախկինում եղել են նման ծրագրեր՝ տեղափոխել հաջորդ ձորակը: Ինչքան էլ մենք պատվարները ամրացնենք, ինչքան էլ հորատանցքերով փորձենք օգնել, օգտակար լինել՝ շատ դժվար է: Մտածեք այդ մասին: 7-8 բալանոց սեյսմիկ գոտի է մեր տարածքը: Իսկ պոչամբարները արժեքավոր պոտենցիալ ունեն, նախկինում՝ թափոնատար էին կոչվում, այսօր կոչվում են տեխնածին հանքավայրեր: Թող գան մշակեն կամ Քաջարանի կոմբինատը վերցնի սկսի մշակել: Արժեքավոր մետաղներ կան այնտեղ: Առաջարկներ շատ կան այդ մասով: Իմ կողմից հաշվարկված է, պոչամբարի բոլոր տվյալներն ունեմ: Նույնիսկ դոլարով հաշված: Երևի 18 մլրդ դոլարի արժեք ունեցող պոչամբարներ ունենք: Այսինքն՝ հարկավոր է տեխնոլոգիական սխեմաներ մշակել և սկսել այսպես կոչված ավազները շահագործել, որոնք պարունակում են արժեքավոր մետաղներ:

Պատասխան (Արման Վարդանյան) – Շնորհակալություն պարոն Հովհաննիսյան առաջարկների համար, կարծիքի համար: Հանաքավայրի մասով առաջարկների մասով միշտ պատրաստ ենք լսել Ձեր կարծիքը, առաջարկները: Իսկ ինչ վերաբերում է պոչամբարին, սեյսմիկությանը և այլն, ինչպես արդեն նշեցինք, ամենախիստ պահանջներով է հաշվարկվել: Եվ դրա հիման վրա, երբ նախատեսում ենք արդեն գոյություն ունեցող պատվարը վերբեռնել՝ պետք

է 17մլն մ³ ավազակոպճային նյութ բերվի, որպեսզի համապատասխանի Հայաստանի համար հաշվարկված արագացումներին:

Խոսք (Սպարտակ Հարությունյան) – Կապան խոշորացված համայնքի ավագանու անդամ «Արծվանիկի ապագա» հասարակական կազմակեպության ղեկավար: «Արծվանիկի ապագա» հասարակական կազմակեպության հիմնական նպատակը այնպիսի ծրագրերի, միջոցառումների իրականացումն է, որը նպատակաուղղված կլինի Արծվանիկ գյուղի պահպանմանը, զարգացմանն ու բարգավաճմանը: Իր նպատակներն իրականացնելու համար մեր կազմակերպությունը համագործակցում է և պատրաստ է համագործակցել պետական կառավարման, Տեղական ինքնակառավարման մարմինների, անհատների, միջազգային կազմակերպությունների և Հայաստանի Հանրապետությունում գրանցված բոլոր կազմակերպությունների հետ: Արծվանիկ գյուղում առկա է բնապահպանական, առողջապահական, մշակութային և սոցիալական լրջագույն հիմնախնդիրներ, որոնց լուծումը հրատապ է դարձնում համագործակցությունը իմ այս թվարկած բոլոր կազմակերպությունների հետ, ինչու չէ նաև՝ բոլորիս հետ: Հուշեմ նաև, որ Արծվանիկ գյուղն այն հին գյուղերից է, որն ունի պատմական հարուստ և հպարտություն առաջացնող անցյալ, արժեքավոր պատմամշակութային հուշարձաններ: Կապված պոչամբարի ընդարձակման հետ, որպես «Արծվանիկի ապագա» հասարակական կազմակերպության ղեկավար, դեմ ենք, թույլ չենք տալու ընդլայնման համար: Արծվանիկցիներով հավաքվելու ենք և թույլ չենք տալու: Պատճառներից մեկը՝ մի շարք անգամ հանդիպել ենք Կայուն զարգացման բաժնի պետ Ստեփանյան Արմենի հետ, քննարկումներ ենք իրականացել: Գյուղացիների մեծ մասը չի գիտակցում, թե ինչ է կատարվում, ինչ է սպասվում իրենց հետագայում: Մարդիկ կորցնում են այսօր ամենաբերի հողերը՝ մեր գյուղի ամենաերքնի մասում, որտեղ պոչամբարն է գտնվում: Ես մեկ շաբաթ է Ստեփանյան Արմենին ասել եմ, այդ հարցը բարձրաձայնել եմ: Ինչո՞վ են զբաղվելու այդ գյուղացիները: Մի այլընտրանք ստեղծեք այդ գյուղացիների համար, զբաղվեն, ինչ-որ տեքստիլ ձեռնարկության տեսքով, տուրիզմի զարգացման տեսքով: Գյուղացիներին զբաղվելու բան լինի: Վաղը չէ մյուս օրը պոչամբարը ռեկուլտիվացիայից հետո չեք պատրաստվում որևէ 40 հազարները տալ գյուղացիներին: Գյուղացին ինչո՞վ է զբաղվելու: Մի շաբաթ է ես այս հարցը բարձրացրել ենք: Ի՞նչ են անելու այդ գյուղացիները, ո՞նց են ապրելու: Եթե գյուղացին, բոլորս էլ լավ գիտակցում ենք, որ զբաղվում է գյուղատնտեսությամբ, անասնապահությամբ: Մենք բոլորս զրկվում ենք այդ ամեն ինչից, այդ հնարավորություններից: Չկա այլընտրանք զբաղվելու համար: Թույլ չենք տալու:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Լավ, արձագանք կա՞:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Իսկապես մի շարք հանդիպումներ են եղել, որտեղ մենք քննարկել ենք այս հարցերը: Ուղղակի ի հիշեցում և ի գիտություն բոլոր ներկաներին, որ այդ հողերի հիմնական մասը, եթե ոչ ամբողջությամբ, արդեն ձևակերպած է և Զանգեզուրի կոմբինատի կողմից, ուղղակի այն հողերը, որոնք արդեն ձևակերպված են եղել և դեռևս չեն անցել շահագործման, գյուղացիները դեռևս օգտվում են այդ հողերից: Ինչ վերաբերում է ընդլայնմանը՝ այստեղ աշխարհագրական տեսանկյունից միգուցե պարոն Վարդանյանը կավելացնի փոփոխություններ, որոնք կարծես աննշան են: Դա էլ ենք մեր քննարկումների ժամանակ խոսացել: Ես ուզում էի արձագանքեի պարոն Հովհաննիսյանի ասածին, որ ասաց արդեն թույլտվություն կա 40-ի, եկեք հստակ այսօր խոսենք մեկ թվի մասին: Դա 22 մլն տոննայի մասին է խոսքը գնում, որի թույլտվությունը կոմբինատը ստացել էր դեռևս 8 տարի առաջ, որի փորձաքննական պահանջ էր մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներկայացնել Արծվանիկի պոչամբարի ընդլայնման ծրագիրը՝ այս արտադրողականության շրջանակներում: Թույլ տվեք ևս մեկ անգամ կրկնվեմ, որովհետև ինչպես հասկանում եմ հարցերի մի զգալի հատված կարծես ենթադրում է, որ 40 կամ այլ արտադրողականության մասին է խոսք գնում: Ես Ձեզ վստահեցնում եմ, որ այսօր մենք հավաքվել ենք 22 մլն տոննա նախագծի շրջանակում քննարկում իրականացնելու համար:

Պատասխան (Արման Վարդանյան) - Մի բան էլ ես կուզենայի ավելացնել: Դուք ասացիք, որ ռեկուլտիվացիայից հետո էլ չեն շարունակելու փողերը տալ և այլն: Այս ընդլայնումը, որը ներկայացնում ենք, որը փորձաքննական պահանջ է, որպեսզի բավարարի 2016 թվականին ստացած մեր արդյունահանման թույլտվությանը, որը ենթադրում է հանքավայրի շահագործում մինչև 2041թվականի վերջ: Այսինքն՝ այս ընդլայնումը նախատեսում ենք կատարել, որպեսզի բավարարի շահագործումը մինչև 2041 թվականի վերջ: Այսինքն՝ այս պահից սկսած ևս 17 տարի:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Նշեմ, որ համայնքը կարևորում է բոլորի կարծիքները, բայց համայնքապետարանն ունի իր քաղաքականությունը և իր վարած քաղաքականության շրջանակներում նաև ուշադրության կենտրոնում է պահում պոչամբարի հարակից ազդակիր բնակավայրերը: Եվ պետք է նշեմ, որ դրանից անմասն չէ նաև Արծվանիկ գյուղը: Եվ այսօրվա դրությամբ Արծվանիկ գյուղում, ի հեմամատ այն մնացած գյուղերի, արվում են ամենամեծ քաղաքաշինական և այլ ծրագրեր, որոնք ուղիղ առընչություն ունեն հանքաարդյունաբերողների հետ: Որպես օրինակ ասեմ՝ մեր արծվանիկցիների առաջին հուզող հարցը եղել է խմելու ջրի

խնդիրը և այսօրվա դրությամբ Արծվանիկում իրականացվում է մոտ 420 մլն դրամ գումարի չափով խմելու ջրի համակարգի անցկացման ծրագիր: Մոտ 340 մլն դրամի ծրագիր իրականացվում է ռոյալթիներով իրականացվող մասհանումներ, որոնք ձևավորվում են հանքարդյունաբերողների կողմից: Իսկ մեր տարածաշրջանում երկու հանքարդյունաբերող են, ինչպես գիտեք՝ «ԶՊՄԿ»-ն և «Կապանի կոմբինատ»-ը: Մենք 270 մլն-ը 2023 թվականի ուղղել ենք ամբողջովին Արծվանիկ գյուղի համար՝ խմելու ջրագիծ անցկացնելու համար: Իսկ մնացած գումարը դիմել ենք «ԶՊՄԿ»-ին, որպեսզի «ԶՊՄԿ»-ն էլ հատկացնի, որի հետ կապված «ԶՊՄԿ»-ն տվել է իր համաձայնությունը՝ սոցիալական ծրագրերի շրջանակում իրականացնելու: Հաջորդ ծրագիրը խմելու ջրի՝ 80 մլն-անոց ծրագիրն է, որն իրականացվել է սուբվենցիոն ծրագրերով և համայնքի մասնաբաժնի համար նույնպես դիմել ենք «ԶՊՄԿ»-ին, որպեսզի «ԶՊՄԿ»-ն հատկացում իրականացնի: «ԶՊՄԿ»-ն համաձայնվել է այդ հատկացումն ևս իրականացնել: Դա ըստ առաջանահերթության: Երկրորդը՝ Արծվանիկում ներկա դրությամբ նաև իրականացվում է ճանապարհաշինական աշխատանքներ, նույնպես սուբվենցիոն ծրագրերով, որտեղ իր մասնաբաժինն ունի «ԶՊՄԿ»-ն: Համայնքի մասնաբաժնի առումով նույնպես դիմել ենք և սոցիալական ծրագրի շրջանակներում իրականացվում է: Իրականացվում է նաև մանկապարտեզի բակի հիմնանորոգման աշխատանքներ, նույնպես սուբվենցիոն ծրագրերով: Համայնքի մասնաբաժինը իրականացվում է «ԶՊՄԿ»-ի միջոցներով: Ընդհանուր գումարային առումով մոտ 600 մլն դրամի չափով այժմ աշխատանքներ է իրականացվում Արծվանիկ բնակավայրում, իհարկե աշխատանքներ են իրականացվել նաև նախկինում: Այսինքն՝ սա այն քաղաքականությունն է, որն իրականացվում է համայնքապետարանի կողմից Արծվանիկ գյուղում՝ արծվանիկցիների կյանքն ավելի բարեկեցիկ դարձնելու համար: Պետք է նշեմ, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն անմասն չէ իր ծրագրերով, իր աջակցություններով: Ինչ վերաբերում է 40 հազար դրամներին, պետք է ասեմ, որ 2026 թվականի, այսինքն այն ինչ նախատեսված էր նախագծով 2026 թվականին պետք է Արծվանիկի պոչամբարում պարզապես դադարեցվեր պոչանքների տեղադրումը և իհարկե, բնականաբար նաև դադարելու էր սոցիալական աջակցությունը: Մինչև 2041 թվականը պոչանքների տեղադրումն Արծվանիկի պոչամբարում ենթադրում է այդ սոցիալական աջակցությունների տրամադրման շարունակությունը, որը համայնքապետարանի կողմից հիմնական պահանջներից մեկն է լինելու: Ես, իհարկե, կանրադառնամ իմ ամփոփիչ խոսքում այդ ամենին՝ ավելի ընդհանրացված կերպով, բայց ուզում եմ նշեմ, որ այսօրվա դրությամբ մենք գոհ ենք մեր գործընկերների՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության

վերաբերմունքից՝ կապված ազդակիր բնակավայրերի ընդհանուր ծրագրերի համատեղ իրականացման գործընթացից: Այլ հարցեր:

Հարց (Սպարտակ Հարությունյան) – Հուշեմ նաև պարոն Փարսյան, մեր մի շարք հանդիպումների ընթացքում նաև բարձրացրել ենք այսպիսի հարց, որ կա՞, եղե՞լ է ինչ-որ մի ուսումնասիրություն, որ թույլատրելի է այդքան մոտ բնակչություն լինի, կամ պոչամբարին այդքան մոտ գյուղատնտեսական աշխատանքներով զբաղվեն: Եվ մենք ստացել ենք այս պատասխանը՝ ո՛չ, բացասական պատասխան:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Արձագա՞նք

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Շնորհակալություն հարցի համար: Դուք գիտեք, որ ամռանը մենք նախաձեռնել ենք և սկսել ենք Ձեր հարցի շուրջն ավելի ընդլայնված մի հետազոտություն, որը նաև պատասխանելու է թե Ձեր այդ հարցին և թե ընդհանուր առմամբ առողջության վրա ազդեցության գնահատականն է տալու: Եվ այդ աշխատանքի շրջանակներում նաև Ձեր հետ են հանդիպումներ տեղի ունեցել: Կան նախնական տվյալներ, որի մասին դեռևս վաղ է խոսել, բայց այո՛, այդ հարցի պատասխանը այս նախագծի շրջանակներում կգտնեք: Նախնական տվյալների շրջանակում, իհարկե, արգելող բան այս պահի դրությամբ չի բացահայտվել: Այդ հարցի պատասխանը հիմնականում կարող եմ այսօր այսքանը պատասխանեմ: Հարցի երկրորդ մասը՝ դեռևս բավ է ինչ-որ եզրահանգումների գալ: Մենք վստահ ենք, որ առողջության ազդեցության տեսանկյունից՝ կարծրատիպային մտածելակերպի, թե որոշ այլ բաների հիման վրա խիստ չափազանցված են ազդեցությունները և այն նախնական տվյալները դրա մասին արդեն փաստացի հաստատուն են, բայց վերջնական արդյունքները մեր հաջորդիվ հանդիպումների ժամանակ սիրով մենք Ձեր հետ կկիսվենք: Բայց կրկնվեմ, հեռավորությունը այս պահի դրությամբ ոչ մի խնդիր չի տալիս, որևէ ազդեցություն:

Հարց (Վարդուհի Օհանջանյան) - «Բաղաբերդ բարեգործական» հասարակական կազմակերպության նախագահ: Մասնագիտությամբ քիմիկոս եմ: Ուզում եմ շարունակել մեր հարգարժան դասախոսի ասածը: Ձեր ներկայացրած ՇՄԱԳ-ի մեջ ես կարդում եմ գլխավոր միներալներն իրենցից ներկայացնում է խալկոպիրիտը և մոլիբդենը: Խալկոպիրիտը պարունակում է մեծ քանակությամբ երկաթ և ինձ համար խիստ զարմանալի է, որ երկաթի վերամշակում տեղի չի ունենում: Շարունակում եմ, ուղեկցող բաղադրամասերն են՝ ռենիում, ոսկի, արծաթ, սելեն, թելուր, բիսմուտ և ծծումբ: Գուցե Ձեզ ոչինչ չի ասում այս քիմիական տարրերը, բայց այս քիմիական տարրերի մեջ նշված են հազվագյուտ և ցրված տարրեր, որոնք շատ ավելի թանկ արժեն քան 1 տոննա մոլիբդենը: Ինչո՞ւ եմ այստեղից սկսում իմ

հարցադրումները, որովհետև պոչամբարը ինքնին առանձին կառույց չէ: Դա բխում է մեր Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի բաց հանքավայրից, որն ի սկզբանե շահագործվում էր փակ ձևով, հիմա արդեն բացահանքի ձևով է շահագործվում: Ի՞նչ էի ուզում ասել: Ոչ մի տեղ, հատկապես ՇՄԱԳ-ի մեջ, ես չեմ կարդում, որ նշված լինի այստեղ վոլֆրամի առկայությունը: Հարգելի ԶՊՄԿ-ի ներկայացուցիչներ, Ձեր լաբորատորիաներում միչև 35 քիմիական տարր կարող եք դուք հայտնագործել, այդ թվում նաև վոլֆրամը: Վոլֆրամն ջերմամիջուկային ռեակցիաների մեջ դա օգտագործումն է: Բոլոր պատերազմներն երկրագնդի վրա մղվում են էներգակիրների համար: Ջերմամիջուկային ռեակցիաները, որոնք այսօրվա դրությամբ կատարվում են քիմիական լաբորատորիաներում 125 % շահավետությամբ բերելու է նրան, որ բոլոր էներգակիր ունեցող երկրները կորցնում են իրենց ռազմավարական նշանակությունը: Ռազմավարական նշանակություն ստանում է Հայաստանի Հանրապետությունն՝ իր վոլֆրամ պարունակող հանքավայրերով: Եվ շատ ավելի մեծ քանակությամբ էներգիա արտադրելու հնարավորություններով: Ես ուղղակի ապշում եմ, որ Ձեր փորձագետները նման բաներ չեն քննարկել: Հաջորդ հարցս նորից նույն հարցի շուրջ է: Ուզում եմ նորից բանախոսին շարունակելով ասել. 2016 թվականին Վահե Ալբերտի Հակոբյանը հավաքելով մի մեծ դահլիճ, այստեղ՝ այս մշակույթի պալատում բոլորիս առջև չեմ կարծում, որ մարզպետը (այն ժամանակվա մարզպետը, որը եղել է ԶՊՄԿ-ի գործադիր տնօրենը) կարող էր նման հայտարարություն կատարել, չունենալով իր ձեռքի տակ դրա համար հավաստի տվյալներ: 2016 թվականին նա խոստացավ կառուցել Արծվանիկի պոչամբարի վերամշակումը՝ երկրորդային վերամշակման գործարան: Բոլորս ծափահարեցինք, տուն գնացինք ու մինչև այսօր մենք սպասում ենք այդ երկրորդային վերամշակման գործարանին: Ինձ մի ասեք, որ դա բավականին թանկ է նստում, որովհետև այն ամենն ինչ-որ այստեղ նախատեսված է դրանից գուցե 3-4 անգամ էժան է, բայց մարդու կյանքից և առողջությունից բարձր բան գոյություն չունի: Դա ամրագրված է ՀՀ սահմանադրությամբ: Ընդերքը ժողովրդինն է և առաջնահերթ մարդու առողջությունն է: Հաջորդը՝ սեյսմիկ կայունության հարցը: Դուք ասում եք, որ երբ ավելանա պոչամբարի ծավալները դուք գնահատում եք սեյսմակայունությունը, բայց բալով չեք ասում: Պոչամբարը, որը շահագործվել է 77 թվականին, ուրեմն դու գիտեք, որ սովետական միության ժամանակաշրջանում սեյսմիկ վտանգները միշտ եղել են շատ ու շատ ավելի ցածր նիշերով: Եվ չեմ կարծում, որ նախատեսված է 9 բալանոց երկրաշարժի պարագայի համար: Եթե 9 բալանոց երկրաշարժ տեղի ունենա, ապա Արծվանիկի պոչամբարը տրմապատելու է ամբողջ Սյունիք բնակավայրն՝ իր հարակից գյուղատնտեսական հողերով հանդերձ: Ուրեմն՝ առաջարկում եմ

Ձեր ՇՄԱԳ-ի մեջ սեյսմիկ կայութնությունը գնահել բալերով, եթե հնարավոր է, ապա իմ կարծիքով սա բոլոր կապանցիների երազանքն է երևի, տեսնել ոչ թե աշխարհի ամենամեծ պոչամբարը, այլ այդ պոչամբարը, որից շահագործել այնպես, որ ծավալները փոքրանան: Շնորհակալություն:

Խոսք Գևորգ Փարսյան - Արձագա՞նք:

Պատասխան (Արման Վարդանյան) – Շնորհակալություն բարձրացրած հարցերի վերաբերյալ: Երեք հարց գրանցեցինք մենք: Հերթով փորձեմ պատասխանել: Նախ՝ ուղեկից բաղադրիչների հետ կապված, այո՛ լաբորատորիայում անում ենք բազում քիմիական տարրերի անալիզ և հայտնի են պարունակությունները այդ քիմիական տարրերի: Սակայն, մի կասկածեք, որ եթե տարրերի կոնցենտրացիան այքան մեծ լիներ, որ տնտեսապես ձեռնտու լիներ նրանց կորզումը, մենք չէինք պահի, անպայման կանեինք: Եվ հետագա տեխնոլոգիաների զարգացման պարագայում միգուցե տվյալ մետաղների գների շատ բարձրացման պարագայում հնարավոր կլինի: Դրանք պոչամբարեր կունենան միգուցե մենք կամ ուրիշ տնտեսվարողներ դրանք ապագայում տնտեսապես եկամտաբերության պայմաններում կվերամշակեն: Ինչ վերաբերվում է պոչերի վերամշակմանը, գիտեք նման օրենսդրական ակտեր կան, հին պոչամբարերի վերաբերյալ, բայց ուղղակի դուք պատկերացրեք, որ պոչամբարը եթե վերամշակվի, ապա վերամշակման թափոններ ևս ինչ-որ մի տեղ պետք է պահեստավորվեն, կուտակվեն: Այսինքն՝ ամեն պոչամբար վերամշակելը ենթադրում է մեկ նոր պոչամբարի առաջացում: Խնդրում եմ հաշվի առեք: Իսկ երրորդ հարցը՝ կապված սեյսմիկ կայունության և բալերի հետ Արմենակ Սահակյանը կպատասխանի ավելի մասնագիտորեն:

Պատասխան (Արմենակ Սահակյան) - Շնորհակալություն հարցի համար տիկին Օհանջանյան: Նախ ի՞նչ է բալը: Բալը՝ զգայական մոտեցում է, թե տվյալ երևույթը յուրաքանչյուր մարդ ինչպես է զգում: Եվ, եթե նայենք բալերի բացատրությունը, որը ներկայացված է NSK 64 դետալացիայում շկալայի, ներկայացված է զուտ զգայական: Ինչպես տեսաք սովետական ժամանակ, այդ թվում նաև նորանկախ Հայաստանի նոր նորմատիվային փաստաթղթերում կար բալային նշում: Սակայն վերջին նորմայով արդեն բալային նշումը դուրս է եկել, որովհետև տեղի ունեցած այդ նույն երկրաշարժը նույն արագացմամբ պայմանական ասենք 0,3 արագացմամբ երկրաշարժ է, մի հատվածում կախված գրունտներից և դրանց տեսակից կարող է զգացվել 9 բալ, մյուս հատվածում՝ կապված գրունտներից և տեսակից կարող է զգացվել 7 բալ: Ուստի բալային համակարգով սեյսմիկ ազդեցության չափագրումը սխալ մոտեցում է: Ինչ վերաբերում է սեյսմիկ առանձին հետազոտության, այո՛, ԶՊՄԿ-ի կողմից

իրականացվել է Արծվանիկի պոչամբարի տեղամասի սեյսմիկ վտանգի հավանական N գնահատում: Սեյսմիկ վտանգի հավանական N գնահատում կատարվել է խոշոր պատվարների միջազգային կոմիտեի 148 բուլետենի համաձայն: Համաձայն որի իրականացվել է պատվարի գնահատում՝ երկու սեյսմիկ դեպքում: Առաջին դեպքում 50% հավանականություն, որ նմանատիպ երկրաշարժ տեղի կունենա և երկրորդ կրիտերիան 10 հազար տարվա հավանական կրկնության դեպքում՝ 0,01% երկրաշարժ հնարավոր է, որ տեղի ունենա: Արդյունքում ստացվել է, որ Արծվանիկի պոչամբարի տեղամասի գրունտների առավելագույն արագացումը 0,43g՝ 10 հազար տարվա կրկնության դեպքում, որը ավելի մեծ է, քան Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվաիրավական փաստաթղթերում: Ուստի այս անգամ ևս Արծվանիկի պոչամբարի նոր նախագծի շրջանակներում կիրառվելու է առավել կոնսերվատիվ մոտեցում, քան ներկայացված է ՀՀ պահանջվող նորմերում և իրավական այլ փաստաթղթերում: Շնորհակալություն:

Մեջբերում (Վարդուհի Օհանջանյան) - Իհարկե, դուք որպես տնտեսվարող սուբյեկտ ներկայացնելու եք Ձեր շահերը, բայց մենք էլ որպես այս համայնքի քաղաքացի ուզում ենք մեր շահերը պաշտպանված տեսնել: Մյուս հարցս շարունակվում է: Հարստացուցիչ ֆաբրիկայից պոչերը տեղափոխվում են պոչամբար՝ 34,5 կմ երկարությամբ արագահոս ուղեգծով, որն անցնում է հիմնականում Ողջի գետի ձախ ափով: Ես կարդում եմ Ձեր ՇՄԱԳ-ից: Խիստ կտրտված ռելիեֆով, որը ներկայացված է խորը կիրճերով, գոգահովիտներով: Իհարկե, այստեղ շատ լավ է, որ դու երկու պոչատարային գիծ ունեք՝ աշխատանքային և ռեզերվային, բայց այս պոչատարը ճիշտն ասած վթարվել է մի քանի անգամ: Ինչքանո՞վ եք դու գնահատում, որ պատասխանատու հանքարդյունաբերություն կարող եք իրականացնել և չաղտոտել անդրսահմանային Ողջի գետը և չունենալ արդեն միջպետական խնդիրներ մեր հարևան թշնամի երկրի դեմ:

Պատասխան (Ասյա Ղազարյան) - Շնորհակալություն հարցի համար: Նախ նշենք, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ը շահագործում է ներկայումս, հիմնական պոչատար խողովակաշարը, որի տամագիծը 1020 մմ է և ունի երկու ռեզերվային պոչատար խողովակաշար, համապատասխանաբար՝ երկուսն էլ 720 մմ: Յուրաքանչյուր դյուկերային անցումներում մենք ունենք նախատեսված հակավթարային և պահուստային ավազաններ, որոնք համապատասխանաբար անցել են Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննություն, դեռևս 2023 թվականին և որոշակի աշխատանքներ արդեն իրականացվել են: Եվ ի լրումն նշեմ, որ ներկայումս փորձաքննություն է իրականացվում: Փորձաքննական

գործընթացը արդեն սկսել է նոր խողովակաշարի կառուցման, որը կլինի արդեն հիմնական գիծ և որի տրամագիծը կլինի 1220 մլիլիմետր, որն ավելի կնվազեցնի հնարավոր ռիսկերը՝ վթարների առաջացման և ինչպես նաև հնարավորություն կտա արդեն 1020 միլիմետրանոց խողովակը և համապատասխանաբար մնացյալ երկու խողովակները օգտագործել որպես ռեզերվային: Այսքանը՝ շնորհակալ եմ:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Այլ հարցե՞ր:

Հարց (Նիկոլայ Առուստամյան) - Ողջունում եմ: Անունս՝ Նիկոլայ, ազգանունս՝ Առուստամյան: Սյունիք բնակավայրի բնակիչ եմ: Մի քանի հուզող հարցեր ունեմ: Ձեր ուսումնասիրություններում ինչպես նշեցին մեր գործընկերները կապված առողջության վտանգի հետ: Պահանջե՞լ եք նման ինֆորմացիա օնկոլոգիական հիվանդությունների տոկոսի հետ կապված, թե ոչ: Երկրորդը՝ Ձեր ներկայացրած ծրագրում միայն մասնագիտական նշումներ են, կխնդրեմ նաև, եթե հնարավոր է հրապարակային տրամադրեք քարտեզից հատված, որտեղ կերևա բնակավայրերի անունները և ինչպես դուք նշեցիք արդեն ունեք հողատարածքներ, որոնք Ձեր ընկերության կողմից սեփականաշնորհվել են, նշումով երևա, թե տվյալ հողատարածքը Սյունիք բնակավայրի, Արծվանիկ բնակավայրի և մնացած այլ բնակավայրերի ո՞ր հատվածում է ընկնում: Ունե՞ք նշված վաք Ձեր քարտեզի մեջ նոր կառուցվող և այդ վաքը, որ բնակավայրերի միջով է անցնելու: Այդ մի հարցը: Մյուսը՝ ինչպե՞ս դուք ներկայացրել եք, որ սոցիալական աջակցության ծրագրերում բավականին մեծ մասնակցություն ունեք: Շեշտը մեծամասնությամբ տրված է Արծվանիկի, Աճանանի և ևս երկու համայնքի վրա, իսկ ազդարար համայնք, որը գտնվում է հենց պոչամբարի բարձրությունից բավականին ցածր՝ Սյունիք բնակավայրն է: Այնտեղ Ձեր կողմից չի իրականացվում սոցիալական աջակցության ծրագիր: Խոսքը վերաբերվում է այդ բոլորիս հայտնի 40 հազարական դրամներին, որի վերաբերյալ եղել է բազմակի, բազում քննարկումներ: Պատասխան է հնչել Ձեր ընկերության պաշտոնատար անձանց կողմից, որ տվյալ գումարի տրամադրման որոշումը եղել է նախկինում և տվյալ որոշումը Ձեզ համար ընդունելի չէ, դա սխալ է: Ինչպես և դուք եք հիմա նշում, որ տվյալ ֆինանսական աջակցությունը կատարվելու է մինչև նախատեսված՝ 2041 թվականը: Եվ ինչպես նշեց համայնքի ղեկավարը՝ բնականաբար ենթադրում է տվյալ աջակցության շարունակության տրամադրումը: Ինչո՞ւ Սյունիք բնակավայրը իր բնակիչներով ընդգրված չէ այդ ծրագրում և արդո՞ք նախատեսում եք ընդգրկել թե՞ ոչ: Անվտանգային հարցերից մեկը՝ ավելի խոցելի է Սյունիք բնակավայրը, քանի որ Սյունիք բնակավայրի դպրոցում Արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակիցների

կողմից պարբերաբար իրականացվում են անվտանգության հետ կապված տագնապներ փորձնական, ինչ գործողություններ պետք է իրականացնեn երեխաները, բարձրանան գյուղից վերև գտնվող զերեզմանատուն և այլն: Ինձ թվում է դրա մասին էլ եք դուք տեղյակ:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Արձագանքներ:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Շնորհակալություն հարցի համար: Առանձնացրեցի ըստ էության երեք հիմանական հարցադրում Ձեր կողմից, եթե պակաս ասեմ, խնդրում եմ ավելացրեք սիրով կպատասխանեմ: Սկսենք հիվանդություններից, մասնավորապես՝ շեշտեցիք օնկո հիվանդությունները: Ասեմ Ձեզ ընդհանուր առմամբ վիճակագրությունը հետևյալն է, հիմնականում վերաբերվում է մեր աշխատակիցներին և հիշեցնեմ, որ հիմնական մեր աշխատակիցները մոտ 85-90 %-ի չափով գալիս են հենց բացահանքի և պոչամբարի շրջակա համայնքներից, ինչպես նաև Կապան խոշորացված համայնքից: Տեսեք ունենք մոտավորապես 4666 աշխատակից 2023 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Եվ իրենց ընտանիքի անդամները, որոնք նույնպես ապահովագրված են, ընդհանուր բժշկական ապահովագրություն ունեցողների թիվը կազմում է մոտավորապես 16 հազար հոգի: Այդ 16 հազար հոգին 2022, 2023, 2024 թվականի դրությամբ է, ինչպես նաև կարևոր է նշեմ, որ ունենում ենք այդ համայնքից դիմումներ 16 հազար հոգուց դուրս: Այդ ամբողջ դիմումների մասով օնկո հիվանդությունների դիմումները՝ 2022 թվականին կազմել է՝ 114 դիմում՝ 114 անձ, 2023 թվականի՝ 110, 2024 թվականի դրությամբ մինչև հոկտեմբեր ամիսը ներառյալ՝ 93 անձ: Եվ սա նոր թվեր չեն: Տարեց տարի, իհարկե, այս թվերի մեջ կրկնվում են անունները: Այնպես չի, որ 114 էր, մյուս տարի գումարվեց ևս 110 հոգի: Ընդհանուր առմամբ դիմումները այդքանն են և, եթե դա վերածենք վիճակագրական տվյալների ստացվում է, որ Հայաստանի վիճակագրությունը միջինացված մոտավորապես 4-ից 5 անգամ ավելի բարձր է, քան 16 հազար հոգու պարագայում: Այսինքն՝ այդ հնչած թվերը խիստ չափազանցված են օնկո հիվանդությունների մասով: Ասեմ ավելին՝ թեթև անդրադարձ անեմ այդ միջազգային փորձագետների ուսումնասիրության նախնական բացահայտումների վերաբերյալ: Հիմանական խնդիրները, որ կապված են համայնքի հիվանդությունների հետ, ցավոք սրտի լյարդի ցերոզի հետ է կապված, որը որևէ կապ չունի մեր գործունեության հետ: Եվ թոքերի խնդիրների հետ, որը ավելի շատ կապ ունի ծխախոտի օգտագործման կամ այլ պատճառների հետ, որոնք ուղղակի կապ չունեն կոմբինատի որևէ գործունեության հետ: Այդ նախնական մեր բացահայտումներն են և մեր միջազգային գործընկերների կողմից: Օնկո հիվանդությունների մասով այսքանը: Օնկոյից բացի ընդհանուր առմամբ հիվանդությունների մասին թույլ տվեք կրկնեմ, որ խիստ չափազանցված են

պատկերացումները և ընկալումները մեր հարգարժան համայքների բնակչների կողմից: Սոցիալական աջակցության մասով, այո՛ թույլ տվեք վերահաստատեմ «ԶՊՄԿ»-ի նոր ղեկավարության դիրքորոշումը և դա համաձայնեցված է համայնքի հետ, որ նոր վերանայում կամ նոր 40 հազարական դրամների մոտեցում չի լինելու 2022 թվականի ամռան ամիսներին, մենք դա կարծես ֆիքսեցինք այդ պահի դրությամբ թվերը և արդեն գործող համայքներում նոր ծնունդներն են հիմանականում, որ մենք ավելացնում ենք այդ 40 հազար դրամականները: Եվ այո՛ Սյունիք բնակավայրում տարբեր հանդիպումների ժամանակ հստակ մեր դիրքորոշումը արտահայտել ենք, որ 40 հազարականների մոտեցումը մենք ցավոք սրտի չենք կարող այսօր կիրառել: Բայց նաև մենք պայմանավորվել ենք մի շարք այլ սոցիալական աջակցություններ ցուցաբերել: Մասնավորապես՝ Սյունիք համայնքում, որպես օրինակ՝ արևային կայանների տեղադրումն էր, որ այս տարի մենք մեկնարկեցինք: Տևական ժամանակ մենք նախագիծ էինք իրականացնում: Նախագիծը ներկայացրեցինք համայնքի ղեկավարությանը՝ հավանության արժանացավ և բաժանեցինք մի քանի փուլերի: Առաջին փուլը բաղկացած էր 38 տուն-տնտեսություններից, որտեղ արդեն հաջողությամբ աշխատանքները ավարտվել են: Վերջնական աշխատանքներն արդեն Զանգեզուրի կոմբինատի շրջանակներից դուրս է՝ ՀԷՑ-ը պետք է միացումները տա: Ինչ վերաբերում է կոմբինատին, ապա աշխատանքներն ավարտված են, հաջորդիվ՝ երկու փուլով մենք կավարտենք և ամբողջությամբ կծածկենք Սյունիքի համայնքը: Մնացած սուբվենցիոն ծրագրերը պարոն Փարսյան Ձեզ խնդրեմ, Դուք անդրադառնաք և մենք մեր բոլոր խոստումները ինչ-որ հնչեցրել ենք մենք մեր մի քանի հանդիպումների ժամանակ հետևողականորեն համայնքի ղեկավարության հետ համաձայնեցնելով իրականացնում ենք: Այսքանը Ձեր կողմից բարձրացրած երկրորդ հարցի վերաբերյալ: Իսկ ինչ վերաբերում է քաղաք-քարտեզի վրա տեղադրելուն, եթե չենք արել, իհարկե...

Պատասխան (Ասյա Ղազարյան) - Ի լրումն նաև նշեմ, որ Ձեր կողմից նշված Արծվանիկ գետի տեղափոխման խողովակաշարը քարտեզի վրա արտացոլված է կարող եք տեսնել: Մենք ապագայում ավելի մանրամասն հողերի կլասիֆիկացիան կներկայացնենք: Անցնում է հիմնականում Սևաքար և Չափնի գյուղերով՝ տվյալ ենթակառուցվածքը: Հողերի քարտեզը ներկայումս մանրամասն մշակվում է, որպեսզի մենք կարողանանք մաքսիմալ արտացոլել ներկայիս իրավիճակը և հասկանանք արդյոք ունենք հողակտորներ, որոնք դեռևս կատեգորիայի փոփոխության կարիք ունեն, թե ոչ, և ինչքան, ինչ հերթականությամբ մենք

դրանք պետք է օտարենք: Դրանց ավելի մանրամասն կանդրադառնանք հաջորդիվ, միգուցե երկրորդ հանրային լսման ժամանակ, եթե ոչ ավելի վաղ: Շնորհակալություն:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Շնորհակալություն: Ես որոշակի դիտարկումներ անեմ, որպեսզի չպարզաբանված հարցեր չմնան: Նախ սկսեմ հողերի հետ կապված: Ինչ վերաբերում է վարչական սահմանների սահմանազատմանը՝ կարծում եմ այդքան էլ էական չէ, քանի որ նախկինում գերակա շահ ճանաչված հողատարածքներն արդեն տրամադրված են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությանը՝ կառուցապատման իրավունքով, քանի որ այն հանդիսանում է արդեն ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողեր և դրանք տրամադրվում են կառուցապատման իրավունքով, որպես արդյունաբերական նշանակության հողատարածքներ: Թե ընդլայնման արդյունքում ևս ինչքան և ինչ քանակությամբ հողատարածքներ կպահանջվեն՝ դեռ կուսումնասիրենք, բայց չեմ կարծում, որ ինչ-որ մեծ թիվ կլինի կամ շատ մեծ նշանակություն կունենա: Ինչ վերաբերվում է սոցիալական ծրագրերին, ապա մենք հրավիրել ենք Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի ներկայացուցիչներին հանդիպում ունենալու հենց բնակավայրում, խոսելու սոցիալական ծրագրերի, աջակցությունների վերաբերյալ և եկել ենք նման պայմանավորվածության, որ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը պետք է նաև ծրագրեր իրականացնի Սյունիք բնակավայրում, ինչպես նաև հարակից բնակավայրերում, ինչպիսին են օրինակ՝ Սզնակը, Դիցմայրին: Եվ ասեմ, որ այդ օրվանից սկսած նաև «ԶՊՄԿ» ՓԲ ընկերությունն իր ներդրումն ունի տարբեր ծրագրերում, ինչպիսին օրինակ՝ Սյունիք բնակավայրի գյուղամիջյան ճանապարհների ասֆալտապատումն է, որը նույնպես իրականացվեց սուբվենցիոն ծրագրով, որտեղ համայնքի մասնաբաժինը ֆինանսավորվեց «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության կողմից: Այսօրվա դրությամբ լուծվում են կարևոր կենսական նշանակություն ունեցող հարցեր՝ Սզնակ և Դիցմայրի գյուղերի համար: Դա խմելու ջրի ջրագծերի կառուցումն է, որն ընդհանուր գումարային արտահայտությամբ մոտ 250 մլն դրամ է կազմում և այստեղ ևս կա համայնքի մասնաբաժին՝ համաֆինանսավորող «ԶՊՄԿ» ՓԲԸ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բնակչությունը որոշակի նաև կարիքներ ունի սոցիալական առումով, մենք նաև որոշեցինք, որ հնարավոր է միջոցներ կիրառել, որպեսզի թեթևացնենք բնակչության կոմունալ ծախսերը: Եվ դրա արդյունքում որոշվեց, որ բոլոր գյուղական բնակավայրերում՝ Սյունիքում և հարակից գյուղական բնակավայրերում կտեղադրվեն արևային պանելներ և ջրատաքացուցիչներ: Դրանով իսկ կթեթևանա նրանց կոմունալ ծախսերը: Ասեմ, որ ծրագիրը մեկնարկել է և այս

տարի 38 տնտեսություններում արդեն տեղադրվել են արևային պանելներ և ջրատաքացուցիչներ: Ծրագիրը շարունակական է լինելու և կտեղադրվեն մնացյալ բոլոր տնտեսություններում, ինչպես նաև հարակից բոլոր գյուղական բնակավայրերերի տնտեսություններում: Ծրագիրը շարունակական է և կիրականացվեն նաև այլ ծրագրեր, որոնք գյուղերի բնակիչների համար կարևոր նշանակություն կունենան: Ամեն տարի ծրագրեր պետք է իրականացվեն նաև Սյունիք գյուղի և Սյունիք գյուղի հարևանությամբ գտնվող գյուղական՝ Սգնակ, Դիցմայրի, Բարգուշատ, Խորձոր գյուղական բնակավայրերում ապրող բնակիչների համար: Այսինքն՝ նախատեսված է համայնքի կողմից և բնականաբար մենք նախատեսում ենք, որ նման դրույթ կներառվի հետագա նախագծի մեջ, որի հետ կապված ես իմ ամփոփիչ խոսքում կանդրադառնամ: Շնորհակալություն: Այլ հարցե՞ր:

Հարց (Սպարտակ Հարությունյան) - Որպես ավագանու անդամ պարտավոր եմ գյուղացիներին հետաքրքրող հարցեր բարձրացնել: Գյուղացիներին հետաքրքրում է հետևյալը՝ մեր տարածքում, պարոն Ստեփանյան, Ձեր կատարած գործունեության արդյունքում թողած բացասական ազդեցությունը ինչպե՞ս է կառավարվում: Ինչպե՞ս է ընկերությունը պատրաստվում նվազեցնել կամ բացառել այդ բացասական ազդեցությունը: Շնորհակալություն:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Ընդհանուր բացասական ազդեցություն ասելով շատ լայն է: Ես միգուցե ամփոփեմ երկու մասով: Եթե չբավարարի, ապա խնդրում եմ ավելացրեք : Հիմնականում, ինչը վերաբերվում է Ձեր ասած բացասական ազդեցությանը, ապա օդի աղտոտվածությանը կանդրադառնանք: Մասնավորապես՝ փոշու առկայության վերաբերյալ, որը բազմիցս դուք մեր հանդիպումների ժամանակ բարձրացրել եք: Ասեմ, որ կազմակերպությունը՝ անկախ նրանից այս նախագիծը ինչ ավարտ կունենա, մենք մեր հաջորդ տարվա նախագծերի մեջ ներառել ենք փոշու կառվարման համակարգեր , որ արդեն հաջող փորձարկվել է Քաջարան համայնքում: Դա տեղայնացնելու ենք նաև պոչամբարի հարակից հատվածներում, ինչպես նաև, եթե չբավարարի արդեն եղած փորձի վրա կզարգացնենք և կկիրառենք դրա ավելի ընդլայնված կամ նոր տարբերակները: Մասնավորապես՝ փոշու կառավարման թնդանոթների տեղադրումն է, ինչպես նաև մի շարք այլ ծրագրեր: Երկրորդը՝ ջրի կամ պարզվածքի որակին էլ անդրադառնանք, որ մեր մոնիթորինգը ցույց է տալիս, որ կարիք կա այդտեղ միջոցառումներ ներդնելու և կիրառելու, մասնավորապես՝ 2023 և 2024 թվականի արդյունքները Ձեզ ասեմ: Պարզ, որ 2023 թվականի դրությամբ ընդհանուր 16 պարամետր է, որ գերազանցել է Հայաստանի Հանրապետության կողմից թույլտվությամբ սահմանված թույլատրելի սահմանային արտահոսքերը՝ 16 պարամետր, 2024 թվականին՝ 18:

Այսինքն՝ խիստ անհրաժեշտություն կա այդտեղ միջոցառումներ կիրառել, որի լուծումը այս նախագծում նույնպես կունենա: Մաքրման կայանի տեղադրումն իհարկե դիտարկվում է, բայց նախագիծը մինչև վերջնական տեսք կունենա քննարկում ենք և ցանկանում ենք փորձել տարբերակներ գտնենք: Եթե իհարկե չգտնվի, ապա մաքրման կայանը կտեղադրենք մինչև այս հարցը կլուծվի: Այսինքն՝ լուծումն այս նախագծում կառաջարկենք, ներկայացնենք քննարկման տեսքով, արդյունքների հաստատման պարագայում այդ միջոցառումները կկիրառենք: Ձեր ասած բացասական ազդեցությունից կառանձնացնեմ այս երկուսը, քանի որ հանդիպումների ժամանակ բարձրացրած հարցերի առյուծի բաժինը այս երկու հարցին է վերաբերում: Եթե Ձեզ հետաքրքրող այլ հարցեր կան, ապա խնդրում եմ նշեք, փորձենք պատասխանել:

Հարց (Սպարտակ Հարությունյան) - Ասեմ նաև, որ Արծվանիկի բնակիչները իրազեկված չեն, թե ինչ եք պատրաստվում անել առաջիկա մեկ տարվա կտրվածքով, ո՞րն է Ձեր սոցիալական քաղաքականությունը:

Պատասխան (Գևորգ Փարսյան) - Պարոն Հարությունյան, ուրեմն սոցիալական քաղաքականությունն իրականացվում է համայնքապետարանի հետ համաձայնեցված: Եվ սոցիալական քաղաքականությունն իրականացվում է համայնքի բնակիչների կարիքներից ելնելով: Նաև ողջունում ենք հասարակական կազմակերպությունների մասնակցությունը սոցիալական քաղաքականությանը մաս կազմելու համար, բայց մեր համայնքի բնակիչների կարիքները վեր է հանվում և բոլոր սոցիալական ծրագրերը համաձայնեցվում է համայնքապետարանի հետ: Այլ հարցե՞ր:

Հարց (Վահագն Գրիգորյան) - Չափնի գյուղի բնակիչ, բնապահպանական հետազոտություններն ի՞նչ արդյունքներ են տվել, այսինքն՝ բնապահպանական առումով պոչամբարը չի՞ վնասում շրջակա միջավայրին:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Շնորհակալություն հարցի համար: Իմ կարծիքով այս նախորդ հարցի պատասխանը ընդհանուր ասված Շրջակա միջավայրի բացասական ազդեցությանը անդրադարձա, ի՞նչ նախագծեր են կամ ի՞նչ մոտեցումներ են իրենց տեղը գտնելու վերջնական նախագծի մեջ: Իսկ նախագծի հաստատման դեպքում արդեն հաջորդիվ քայլը դրանց կիրառելն է:

Լրացում (Ասյա Ղազարյան) - Բացի այդ ի լրումն նշեմ, որ համապատասխանաբար երբ կլինի նախագծային փաստաթղթերը և համապատասխան հետազոտությունները ներառվելու են ՇՄԱԳ հաշվետվության մեջ, գնահատականը տրվելու է և փաստաթղթերը ուղղարկվելու են համապատասխանաբար լիազոր մարմին՝ Փորձաքննական կենտրոն՝ փորձաքննության:

Հարց (Վահագն Գրիգորյան) - Այս վերջին երեք տարիների ընթացքում Չափնի գյուղում չորանում են ընկուզենու ծառերը, մոտ հինգ տարի առաջ թթի ծառերն են չորացել: Չափնի գյուղում մեղուների մեղվատվությունն է ահագին պակասել, այգիների բերքատվությունը: Ես որպես չափնեցի դեմ եմ պոչամբարի լայնացմանը: Մի խումբ չափնեցիների հետ համաձայն չենք, որպեսզի պոչամբարը ընդլայնվի: Շնորհակալություն:

Խոսք (Գևորգ Փարսյան) - Այլ հարցե՞ր:

Հարց (Նիկոլայ Առուստամյան) - Ես շարունակեմ իմ տված հարցի հետ կապված՝ օնկոլոգիական հիվանդությունների հետ կապված հարցս, ոչ թե ուղղված էր միայն ԶՊՄԿ-ի աշխատակիցների առողջության հետ կապված ուսումնասիրության, այլ ընդհանուր մեր Կապան-Քաջարան համայնքի բնակիչների հետ կապված և քանի որ այսօր քննարկվում է պոչամբարի ընդլայնման հարցը, եթե հնարավոր է տրամադրեք պոչամբարին հարակից բնակավայրերի բնակիչների առողջության հետ կապված: Մյուս հարցս՝ ինչպես նշեցիք դուք և համայնքի ղեկավարը, որ իրականացվում են բազում սոցիալական ծրագրեր Սյունիք բնակավայրում և հարակից այլ գյուղերում՝ Սզնակ և Դիցմայրի՝ շնորհակալություն ծրագրերի համար, որ կարողանում եք նման միջոցներ ներդնել: Խոսքս ուզում եմ պարզաբանեմ արևային համակարգերի հետ կապված, նշեցիք, որ առաջին փուլը կարծում եմ այս տարվա ինչ-որ անելիքը արվել է, երկրորդ փուլը մյուս տարի կլինի: Տվյալ համակարգերի տեղադրման արդյունավետության հաշվարկ արդո՞ք իրականացվել է Ձեր կողմից թե՞ ոչ: Ինչո՞ւ եմ այս հարցը տալիս: Բնակելի տուն, որն ունի մեկ շունչ և բնակելի տուն, որն ունի 6, 7, 5, այսինքն՝ 1-ից ավելի շունչ, տեղադրվում է նույն հզորությամբ համակարգեր, ինչպես ջրատաքացուցիչ, այնպես էլ արևային և արդյո՞ք հաշվի է առնվել այն փաստը, որ Սյունիք բնակավայրը ինչպես սահմանամերձ բնակավայր կոմունալ վճարումներից, մասնավորապես՝ էլեկտրոէներգիան վճարում է զեղչով: Այսինքն՝ ինչքանո՞վ է դա արդյունավետ: Նույն 40 հազարական դրամների պարագաում, երբ դա տրվում է յուրաքանչյուր շնչի հաշվարկով, միգուցե այս ծրագիրը, որը իրականացնում եք տվյալ համակարգերի տեղադրումը ևս կախված լիներ շնչերից, հզորությունը համակարգերի: Արդեն տեղադրված կան համակարգեր, կան նաև մեղմ ասած բողոք, համենայն դեպս շնորհակալ ենք: Բողոքը կապված է նրա հետ, որ օրինակ՝ ջրատաքացուցչի դեպքում երբ չկա նման սարքավորվածություն, որ սառը ջրի ճնշումը բարձր է, տաք ջուրը նորմալ չի գալիս: Քանի որ ճնշման կարգավորիչ չկա:

Պատասխան (Արմեն Ստեփանյան) - Սկսեմ օնկո հիվանդություններից: Երևի լրիվ չասեցի կամ փորձեմ ամփոփեմ: Դա որպես օրինակ բերեցի մեր աշխատակիցներն իրենց

ընտանիքի անդամներով, համարելով, որ աշխատակցիների զգալի մասը հենց ներկայանում են շրջակա համայնքները, ինչպես նաև հենց ընտանիքի անմիջական անդամները: Այսինքն՝ այդ վիճակագրությունը ես բերեցի՝ ներկայացուցչական տվյալ է, որը վստահաբար կարող եմ Ձեզ ներկայացնել, բայց դրանք չեն սահմանափակվում: Դա մեր նախնական ունեցած տվյալների բազան է, որի վրա շատ աշխատանք է պետք իրականացնել և չենք սահմանափակվելու միայն օնկո հիվանդություններով: Իհարկե, հետազոտությունները հիվանդությունների ավելի լայն շրջանակ է ծածկելու, որի տվյալներով մենք, իհարկե, նմանատիպ հանդիպումներով կարող ենք կազմակերպել այս ձևաչափից դուրս այլ հանդիպումներ՝ միջազգային հետազոտությունների շրջանակում, որտեղ մենք պարբերաբար, սիրով կարող ենք կիսվել այդ տվյալների հետ: Կրկնում եմ օնկո վիճակագրությունը բերեցի որպես ներկայացուցչական տվյալ: Ձեզ վստահեցնելու համար խորին մտահոգությունները որ կան՝ մասնավորապես օնկո հիվանդությունների հետ կապված, շատ խիստ չափազանցված են: Դա ես պատասխանատու ձևով հայտարարում եմ, օգտագործելով այս հարթակը: Հետո մնացած հետազոտությունները ցույց կտան ավելի գիտական հիմնավորումներ և վիճակագրություն: Միգուցե այդ վիճակագրության որոշ թվեր, համենայն դեպս ներկա գտնվող մարդկանց դուր չգան, որոնք կապացուցեն, որ կոմբինատից դուրս ինչ ազդեցություններ կան այսօր մեր բնակավայրերում, որոնց մասին չենք մտածում, որովհետև կենտրոնացել ենք ամենամեծ տնտեսվարողի շուրջ և բոլոր խնդիրները կապում ենք իր գործունեության հետ: Սակայն դա բացարձակապես այդպես չէ: Եվ հուսով ենք, որ այս հետազոտության արդյունքները, գոնե մասամբ, այդ խնդիրը ընկալման հետ կապված ցույց կտա: Դրանից ավել ցավոք սրտի օնկո հիվանդությունների հետ կապված, մասնավորապես՝ այսօր ավելացնել մենք չենք կարող: Ինչ վերաբերում է արևային կայանների կամ ջրատաքացուցիչների արդյունավետության հետ կապված հարցին, շնորհակալություն հարցի համար: Ձեզ մի քանի թվով ներկայացնեմ այդ նախագծի հիմնական մասերը, որոնք մենք պրեզենտացիայի ձևով ներկայացրել և քննարկել ենք: Տեսեք՝ ընդհանուր առմամբ 38 տնտեսություն միասին տարեկան ծախսում են մոտ 2,5 մլն էլեկտրոէներգիա և ծախսում են 1,4 մլն դրամի գազ: Եվ մոտավորապես 500-600 հազարի փայտ են օգտագործում այդ տնտեսություններում: Հիմնականում այսպիսի թվեր են, իհարկե, ավելի շատ են այդ վիճակագրությունները կամ թվերը և այս ծրագրի արդյունքում յուրաքանչյուր տնտեսություն տարեկան խնայելու է միջինացված թվեր: Շնչերով հիմա դժվարանում եմ պատասխանեմ, բայց կարող ենք առանձին հանդիպել ավելի մանրամասն Ձեզ ներկայացնեմ: Տարեկան կխնայի մինչև 130 հազար հոսանքի գումար և 90 հազար դրամ՝ տաք ջրի գումար: Այսինքն՝ գումարային

յուրաքանչյուր տնտեսություն, միջինացված կարող է մի տնտեսություն մի հոգի է ապրում, մյուսում՝ 10: Սրանք միջինացված թվեր են: Մինչև 220 հազարի խնայողություն է տեղի ունենալու այս ծրագրի արդյունքում: Սրանք ընդհանուր միջինացված թվեր են: Այսքանը արդյունավետության վերաբերյալ, մնացածը՝ հիմա ձեռքիս տակ չունեմ: Եթե պետք է՝ սիրով հանդիպենք, ավելի մանրամասն այդ շնորհանդեսը ներկայացնեմ Ձեզ :

Ամփոփում (Գևորգ Փարսյան) - Իհարկե նորագոյացությունների հետ կապված հարցը բավականին մտահոգիչ է և այն պետք է միշտ լինի մեր ուշադրության կենտրոնում: Եթե հնարավոր լինի նման ուսումնասիրություններ կատարել ազդակիր բնակավայրերի բնակիչների համար, ապա գոհացուցիչ և նախընտրելի կլինի: Բայց նաև, ես մեկ անգամ ուզում եմ հիշեցնել մեր Սյունիք բնակավայրի բնակիչներին, որ մենք՝ «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության հետ պայմանավորվել ենք, որ Սյունիք բնակավայրի բնակիչներն ու հարակից բնակավայրերի բնակիչներն առողջական խնդիրների հետ կապված ցանկացած դիմում երբ ներկայացնում են «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության հիմնադրամ՝ պետք է բավարարվեն: Այս պայմանավորվածությունն ունենք առանձնահատուկ Սյունիք բնակավայրի բնակիչների համար: Իհարկե, օնկոյի կամ նորագոյացությունների հետ կապված այլ թեմա է, բայց առհասարակ սա ես ի լրումն մեր այսօրվա թեմատիկայի: Եվս մեկ անգամ ուզում եմ հիշեցնել, որ մեր Սյունիք բնակավայրի բնակիչները, ով տեղեկացված չէ՝ տեղեկանան, որ ցանկացած իր առողջական խնդիրների հետ կապված, ծախսերի վերաբերյալ, դիմումները ներկայացնեն «ԶՊՄԿ»՝ պետք է բավարարվի՝ ըստ ձեռք բերված մեր պայմանավորվածության: Ինչ վերաբերում է արևային պանելների էներգոխնայողությանը, իհարկե, հաշվի է առնվել, որ 50% ծախսերը հատուցվում են, բայց մենք նպատակ ենք ունեցել փորձել ամբողջովին թեթևացնել կոմունալ ծախսերը: Վերցրել ենք միջինացված թիվ և փորձել ենք այդ թվով առաջնորդվել, որպեսզի բնակիչներն առարկայական, շոշափելի զգան իրենց վրա ծրագրի իրականացումը: Շարունակական ծրագիր է, իրականացվելու են տարբեր ծրագրեր և կրկնեմ, որ այդ ծրագրերը պետք է իրականացվեն մեր բնակիչների կարիքներից ելնելով:

Եթե հարցեր չկան, ապա ես ամփոփեմ այսօրվա հանրային քննարկումը: Մենք, իհարկե կարևորում ենք «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ի գործունեությունը, գործունեության անընդհատությունն ու անխափան աշխատանքները: Ոչ միայն «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ»-ը այսօրվա դրությամբ հանդիսանում է Հայաստանի Հանրապետության թիվ մեկ հարկատուն, այլ նաև Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը մեծ ազդեցություն ունի Կապան համայնքի սոցիալ-տնտեսական կյանքում: Բայց

գործունեության հետ կապված մենք չենք կարող ուշադրություն չդարձնել այն կարևոր խնդիրներին, որոնք մեզ մտահոգում են: Այսօր ասեմ, որ բավականին կարևոր հարցադրումներ են արվել, որոնք ժամանակին նաև որպես հարցադրումներ արվել են համայնքապետարանի կողմից՝ անձամբ իմ կողմից: Եվ որոնք, որպես, թե՛ առաջարկ, թե պահանջ, թե՛ խնդրանք ներկայացվել են «ԶՊՄԿ»-ին, ուսումնասիրման և տվյալ խնդիրների լուծման առաջարկություններով հանդես գալու հանգամանք: Մենք կարևորում ենք, այն հանգամանքը, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գործունեության արդյունքում պետք է նվազեցվեն շրջակա միջավայրի վրա ազդեցությունը: Մենք նաև կարևորում ենք այն հանգամանքը, որ նախագծանախահաշվային փաստաթղթերում ներառվեն երեք կարևոր հանգամանքներ, որը մեր կողմից կներկայացնենք որպես պահանջ, որպես՝ համայնքապետարանի կողմից ներկայացվող պահանջ: Ինչի եմ ասում պահանջ, որովհետև խիստ կարևորում ենք այդ հանագամանքները: Առաջինը վերաբերում է պոչամբարի կայնությանը, այսինքն՝ պոչամբարի շահագործման անվտանգությանը, հատկապես՝ կապված կայունության հարցի վերաբերյալ: Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի տնօրինությունը քաջատեղյակ է մեր կողմից անընդհատ բարձրաձայնվող այդ խնդրին: Եվ մենք ժամանակին խնդրել ենք, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատն իրականացնի ուսումնասիրություն ներկա պոչամբարի կայունության իրավիճակի վերաբերյալ: Եվ այդ ուսումնասիրությունը իրականացվի միջազգային հեղինակություն ունեցող կազմակերպության կողմից, որոնք մասնագիտացված են տվյալ ուսումնասիրությունը իրականացնելու համար: Նշեմ, որ նախնական ինձ տրված են ուսումնասիրության արդյունքներ, որոնք իրականացված են միջազգային կազմակերպության կողմից: Մենք ուսումնասիրել ենք այդ կազմակերպությունը և բավականին տպավորիչ կենսագրություն ունեցող և մասնագիտացված կազմակերպություն է: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գոյություն ունեն որոշակի խնդիրներ՝ ներկայիս պոչամբարի վիճակի վերաբերյալ: Եվ միջազգային ընկերությունը տվել է իր լուծման տարբերակները: Այդ տարբերակներից մեկը՝ 17 մլն մ^3 զանգվածով պատվարի երկու հատվածում ամրաբեռնման աշխատանքներ իրականացնելն է: Սա ամենակարևոր գործոններից մեկն է և այս գործընթացը պետք է անպայման ներառվի նախատեսվող նախագծի մեջ, որպես ներկա պոչամբարի կայունության ապահովման գործընթաց: Իհարկե պետք է հաշվի առնվեն նաև բոլոր դրենաժային համակարգերը՝ ջրահեռացման համակարգերի կազմակերպումը, բոլոր անվտանգության կանոնները: Ինչ վերաբերում է ընդլայնմանը՝ նույնպես կարծում ենք և պարտադիր ենք համարում, որ հետագա ընդլայնման հետ կապված

նույնպես արվի ուսումնասիրություն միջազգային կամակերպության կողմից և միջազգային նման հեղինակություն ունեցող կազմակերպության կողմից արված ուսումնասիրությունների հիման վրա կազմվի ընդլայնման նախագիծ: Կատարված ուսումնասիրությունների և հետազոտությունների, տրված արդյունքների հիման վրա կազմվի նախագիծ: Սա համայնքապետարանի կողմից բարձրացվող կարևորագույն՝ առաջին պահանջն է: Երկրորդ կարևոր խնդիրը համարում ենք բնապահպանական միջոցառումների իրականացումը: Ջրի, հողի, օդի վրա ազդեցությունը պետք է մինիմալացվի: Այսինքն՝ նախագծում պետք է հաշվի առնվեն բոլոր գործընթացները, որոնք համապատասխանեցվելու են Հայաստանի Հանրապետությունում գործող բոլոր նորմերին: Եվ երրորդ կարևոր խնդիրը որ պետք է ներառվի նախագծի մեջ, դա՝ սոցիալ-տնտեսական ազդեցությունն է Կապան համայնքի վրա: Այսինքն՝ սոցիալական ծրագրերի իրականացումը Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի կողմից՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում: Սոցիալական ծրագրերը պետք է իրականացվեն, որպես պարտավորություն: Եվ այդ պարտավորությունը պետք է իրականացվի Կապան համայնքի նկատմամբ տարեկան 2 մլրդ 100 մլն նվազագույն դրամի չափով: Այս գումարը նույնպես պետք է ներառվի նախագծի մեջ: Եվ այդ ծրագրեր պետք է իրականացվեն տարբեր ոլորտներում: Բնակիչներին՝ սոցիալական աջակցության ոլորտում, մշակույթի, սպորտի, առողջապահության, բնապահպանության, կրթության, քաղաքաշինության և այլ ոլորտներում: Իհարկե, այս ծրագրերը նաև պետք է իրականացվեն Տեղական ինքնակառավարման մարմինների, տարածքային կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ համագործակցելով: Այս երեք կարևոր կոմպոնենտերը պետք է ներառվեն նախատեսվող նախագծի մեջ՝ Արծվանիկի պոչամբարի ընդլայնման հետ կապված: Սա համայնքապետարանի կողմից ներկայացվող կարևորագույն խնդիրն է: Քանի-որ խոսքը գնում է մինչև 41 թվական գործունեությանը, պատկերացնում ենք, որ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը սոցիալական առումով կարող է իրականացնել նաև այլ ծրագրեր, որոնք կարող են ունենալ հեռահար կտրվածքով: Եվ սրանք որպես առաջարկ, որպես խոշոր ծրագրեր՝ արդեն ներկայացնում ենք: Կուզենայինք նախագծի մեջ ներառվի այնպիսի ծրագրեր, ինչպիսիք են օրինակ, Վազգեն Սարգսյանի զբոսայգու բարեկարգման աշխատանքները, նոր կառուսելների տեղադրման աշխատանքները, Գարեգին Նժդեհի հուշահամալիրի հարակից հատվածների բարեկարգման աշխատանքներ, Կապանի մարզահամալիրի հիմնանորոգման աշխատանքները: Հանրային տրանսպորտի բնագավառում պատկերացնում ենք, որպես առաջարկ, Բաղաբերդ թաղամասից մինչև Մուշեղ

Հարությունյան թաղամասը տրոլեյբուսների աշխատանքի կազմակերպում: Որպես խոշոր ծրագիր, առաջարկում ենք նախագծի մեջ ներառել ճոպանուղու կառուցում մինչև Խուստուփ լեռ, որը բավականին մեծ ծրագիր է: Սակայն կարծում ենք Կապան համայնքի զբոսաշրջության հետ կապված զարգացման առումով կարող է բավականին խթանիչ գործոն լինել: Սա որպես առաջարկ: Հույս ունենք, որ առաջիկա տարիների ընթացքում իրականություն կդառնան նաև ճամբարի կառուցման աշխատանքները: Սա ներկայացնում ենք որպես հեռահար նպատակներ և առաջարկություններ:

Ես շնորհակալություն եմ հայտնում հանրային քննարկման բոլոր ներկաներին: Շնորհակալություն եմ հայտնում նաև Կապան համայնքի շահերից բխող հարցադրումների և առաջարկությունների համար: Շնորհակալ ենք նաև Ձեզ՝ ներկայացնելու և զեկույցների համար:

<u>Հանրային քննարկման վարող՝</u>

Կապան համայնքի ղեկավար ***Գևորգ Փարսյան***

<u>Նախաձեռնող՝</u>

«ՋՊՄԿ» ՓԲԸ գլխավոր տնօրենի տեղակալ ***Արթուր Նիկողոսյան***